

Ֆինանսական հաշվետվություններ և
Անկախ արտոճողի եզրակացություն

Ավանդների հատուցումը երաշխավորող
հիմնադրամ

2013թ. դեկտեմբերի 31

Բովանդակություն

	Էջ
Անկախ աուդիտորի եզրակացություն	1
Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամների ցանկ՝ 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	4
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	5
Պահուստներում փոփոխությունների մասին հաշվետվություն	6
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	7
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	8

Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրասր Թորնթոն ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան 0012
Վաղարշյան 8/1

Հ. + 374 10 260 964
Ֆ. + 374 10 260 961

Grant Thornton CJSC
8/1 Vagharshyan str.
0012 Yerevan, Armenia

T + 374 10 260 964
F + 374 10 260 961

www.grantthornton.am

Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին

Մեր կողմից իրականացվել է Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի (Հիմնադրամ) կից ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, ընդ որում այդ հաշվետվությունները ներառում են 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների, պահուստներում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և այլ ծանոթագրություններ:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Հիմնադրամի ղեկավարությունը պատասխանատու է Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ, որոնք ազատ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Աուդիտորի պատասխանատվություն

Մենք պատասխանատու ենք աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան մեր կողմից իրականացված աուդիտի հիման վրա նշված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր արտահայտած կարծիքի համար: Այդ ստանդարտներով պահանջվում է աուդիտը պլանավորել և անցկացնել՝ ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ ողջամիտ երաշխիքներ ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվություններում ու համապատասխան ծանոթագրություններում արտացոլված տվյալները հիմնավորող փաստերի ձեռքբերման նպատակով մշակված ընթացակարգեր, որոնց ընտրությունը կախված է խարդախությունների և սխալների հետևանքով ֆինանսական հաշվետվություններում էական խեղաթյուրումների ռիսկերի առկայության վերաբերյալ աուդիտորական գնահատումներից: Ռիսկերի գնահատումները կատարելիս աուդիտորը մշակում է համապատասխան ընթացակարգեր ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության գնահատման, այլ ոչ թե Հիմնադրամի ողջ ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք կազմելու համար: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների և ղեկավարության կողմից կատարված գնահատումների, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Կարծիք

Մեր կարծիքով ֆինանսական հաշվետվությունները տալիս են Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի՝ 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:

2014թ. փետրվարի 7


Գագիկ Գյուլբուդադյան

Տնօրեն



Էմիլ Վասիլյան

Առաջադրանքի ղեկավար



Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամների ցանկ՝ 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

1. Արթուր Ջավադյան – Հայաստանի Հանրապետության ԿԲ նախագահ
2. Արթուր Ստեփանյան – Հայաստանի Հանրապետության ԿԲ խորհրդի անդամ
3. Գագիկ Մինասյան – Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ
4. Կարինե Մինասյան – Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալ
5. Վարդան Արամյան – Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմի ղեկավարի առաջին տեղակալ
6. Աշոտ Օսիպյան – «Արարատբանկ» ԲԲԸ Վարչության նախագահ, գործադիր տնօրեն
7. Արարատ Ղուկասյան – «Բիբլոս Բանկ Արմենիա» ՓԲԸ Գլխավոր գործադիր տնօրեն

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ		2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
	Ծանոթ.		
Ակտիվներ			
<i>Ոչ ընթացիկ ակտիվներ</i>			
Հիմնական միջոցներ	4	1,179	1,359
Ոչ նյութական ակտիվներ	5	13,164	15,816
Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվներ ձեռք բերելու համար	6	2,580	1,980
Մինչև մարման ժամկետը պահվող պարտատոմսեր	7	6,321,999	2,556,408
		<u>6,338,922</u>	<u>2,575,563</u>
<i>Ընթացիկ ակտիվներ</i>			
Պաշարներ		111	86
Դեբիտորական պարտքեր	8	446,849	360,499
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	9	3,243,844	2,809,898
Մինչև մարման ժամկետը պահվող պարտատոմսեր	7	6,859,577	8,020,161
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	10	99,195	-
Ժամկետային ավանդներ	11	2,158,868	1,863,063
Մնացորդներ դրամարկղում և բանկերում		4,047	7,882
		<u>12,812,491</u>	<u>13,061,589</u>
Ընդամենը ակտիվներ		<u>19,151,413</u>	<u>15,637,152</u>
Պահուստներ և պարտավորություններ			
<i>Պահուստներ</i>			
Վերագնահատման պահուստ	12	152,547	10,990
Այլ պահուստներ	13	12,173,595	10,495,306
Կուտակված շահույթ		4,861,843	3,260,898
		<u>17,187,985</u>	<u>13,767,194</u>
<i>Ոչ ընթացիկ պարտավորություններ</i>			
Վարկեր	14	1,958,390	1,862,840
		<u>1,958,390</u>	<u>1,862,840</u>
<i>Ընթացիկ պարտավորություններ</i>			
Կրեդիտորական պարտքեր		2,638	4,718
Այլ պարտավորությունների և ծախսումների գծով պահուստներ		2,400	2,400
		<u>5,038</u>	<u>7,118</u>
Ընդամենը պահուստներ և պարտավորություններ		<u>19,151,413</u>	<u>15,637,152</u>

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2014թ. փետրվարի 7-ին՝

Հերմինե Հարությունյան
 Տնօրեն

Լալա Խաչատրյան
 Գլխավոր հաշվապահ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 8-ից մինչև 35-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Հազար դրամ	2013թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի		2012թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	
	Ծանոթ.			
Ֆինանսական եկամուտ	17	1,675,937		1,322,378
Այլ եկամուտ		71		202
Հատուցումներ աշխատակիցներին		(37,441)		(36,918)
Մաշվածություն և ամորտիզացիա		(3,735)		(3,415)
Այլ վարչական ծախսեր	15	(8,687)		(10,820)
Այլ գործառնական ծախսեր	16	(10,764)		(7,282)
Ֆինանսական ծախսեր	17	(14,382)		(18,510)
Այլ ֆինանսական արդյունքներ	18	(54)		(38)
Արդյունք մինչև հարկերը		1,600,945		1,245,597
Շահութահարկի գծով ծախս	19	-		-
Տարվա արդյունք		1,600,945		1,245,597
<i>Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ Հողվածներ, որոնք հետագայում կվերադասակարգվեն շահույթին կամ վնասին</i>				
Վաճառքի համար նատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի գուտ փոփոխություն	9	141,557		(7,162)
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ հարկումից հետո		141,557		(7,162)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ		1,742,502		1,238,435

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական
 հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 8-ից մինչև 35-րդ էջերում ներկայացված կից
 ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Պահուստներում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատման պահուստ			
	Այլ պահուստներ	Կուտակված շահույթ	Ընդամենը	
2012թ. հունվարի 1-ի դրությամբ	9,197,567	18,152	2,015,301	11,231,020
Այլ պահուստի աճ Գործարքներ հիմնադրի և առևտրային բանկերի հետ	1,297,739	-	-	1,297,739
Տարվա արդյունք Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ	-	-	1,245,597	1,245,597
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ	-	(7,162)	-	(7,162)
2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	10,495,306	10,990	3,260,898	13,767,194
Այլ պահուստի աճ Գործարքներ հիմնադրի և առևտրային բանկերի հետ	1,678,289	-	-	1,678,289
Տարվա արդյունք Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ	-	-	1,600,945	1,600,945
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ	-	141,557	-	141,557
2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	12,173,595	152,547	4,861,843	17,187,985

Պահուստներում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 8-ից մինչև 35-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար դրամ	2013թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2012թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Տարվա արդյունք	1,600,945	1,245,597
<i>Ճշգրտումներ`</i>		
Մաշվածություն և ամորտիզացիա	3,735	3,415
Տոկոսային ծախս	14,282	13,798
Ֆինանսական եկամուտ	(1,675,937)	(1,322,378)
Փոխարժեքային տարբերությունից վնաս	54	38
<i>Գործառնական վնաս նախքան շրջանառու կապիտալի փոփոխությունները</i>	<u>(56,921)</u>	<u>(59,530)</u>
Դեբիտորական պարտքերի փոփոխություն	220	1,453
Պաշարների փոփոխություն	(25)	13
Կրեդիտորական պարտքերի և այլ պահուստների փոփոխություն	(2,080)	938
<i>Գործառնական գործունեության համար օգտագործված դրամական միջոցներ</i>	<u>(58,806)</u>	<u>(57,126)</u>
Վճարված տոկոսներ	(14,345)	(13,852)
<i>Գործառնական գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ</i>	<u>(73,151)</u>	<u>(70,978)</u>
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Պարտատոմսերի ձեռքբերում	(15,312,766)	(11,229,354)
Պարտատոմսերի վաճառքից և մարումից մուտքեր	13,718,113	8,298,561
Հակադարձ ռեպո գործարքների արդյունքում ստացված/(վճարված) դրամական միջոցներ	(99,195)	533,034
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(1,503)	(4,477)
Ստացված տոկոսային եկամուտ	372,948	1,270,564
<i>Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ</i>	<u>(1,322,403)</u>	<u>(1,131,672)</u>
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ներդրված ավանդներ	(200,000)	-
Ստացված երաշխիքային վճարներ	1,591,719	1,204,095
<i>Ֆինանսավորման գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ</i>	<u>1,391,719</u>	<u>1,204,095</u>
Դրամարկղում և բանկերում մնացորդների զուտ աճ/(նվազում)	(3,835)	1,445
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա սկզբում	7,882	6,437
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա վերջում	<u>4,047</u>	<u>7,882</u>

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 8-ից մինչև 35-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամը (Հիմնադրամ) հիմնվել է Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) խորհրդի 2005թ. փետրվարի 4-ի որոշմամբ:

Հիմնադրամը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող իրավաբանական անձ է, որի հիմնադրման հիմնական նպատակը ՀՀ բանկային համակարգի կայունության և հուսալիության ապահովումն է՝ ֆիզիկական անձանց և անհատ ձեռնարկատերերի (այսուհետև՝ ավանդատուներ) բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու միջոցով:

Իր գործունեության շրջանակներում Հիմնադրամը հավաքագրում է «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքով սահմանված պարտադիր վճարներ՝ օրենքով սահմանված ավանդների հատուցման երաշխավորումն ու ավանդատուների շահերի պաշտպանությունն իրականացնելու նպատակով:

Հիմնադրամին երաշխիքային վճարներ են կատարում բոլոր բանկերը, բացառությամբ անվճարունակ բանկերի: Երաշխիքային վճարների հաշվարկման կարգը սահմանում է ՀՀ ԿԲ խորհուրդը: Երաշխիքային վճար կատարող բանկը պարբերական երաշխիքային վճարը կատարում է եռամսյակը մեկ անգամ: Տվյալ եռամսյակի համար պարբերական երաշխիքային վճարը կատարվում է հաջորդ եռամսյակի առաջին ամսվա 10-րդ աշխատանքային օրը: Պարբերական երաշխիքային վճարների գումարի չափը կազմում է հաշվետու եռամսյակի՝ տվյալ բանկի ֆիզիկական անձանց, այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերին պատկանող բանկային ավանդների միջին օրական ցուցանիշի 0.05 տոկոսը, սակայն ոչ պակաս, քան տարեկան մեկ միլիոն դրամ: Եթե հաշվետու եռամսյակի վերջին օրը Հիմնադրամի միջոցները, բացառությամբ վարկերի, գերազանցում են երաշխիքային վճարներ կատարող բոլոր բանկերի նախորդ եռամսյակի բանկային ավանդների հանրագումարի միջին օրական ցուցանիշի 5 տոկոսը, ապա բանկերը պարբերական երաշխիքային վճարներ չեն կատարում: Այդ մասին Հիմնադրամը բանկերին և ՀՀ ԿԲ հայտնում է մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա հինգերորդ օրը: Բանկային ավանդների միջին օրական ցուցանիշը տվյալ ժամանակահատվածի համար հաշվարկվում է այդ ժամանակահատվածի յուրաքանչյուր օրվա վերջի դրությամբ բանկի հաշվեկշռում փաստացի հաշվառված բանկային ավանդների մնացորդի հանրագումարը բաժանելով տվյալ ժամանակահատվածի օրերի քանակի վրա:

Բանկերը լրացուցիչ երաշխիքային վճար են կատարում, եթե Հիմնադրամի միջոցները, բացառությամբ վարկերի, փոխառությունների, երաշխիքների, դրամաշնորհների, նվիրատվությունների և նվիրաբերությունների, բավարար չեն «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և չափով երաշխավորված ավանդների հատուցումն իրականացնելու համար:

Հիմնադրամի երաշխիքային գումարների սկզբնական արժեքը հիմնադրման պահին կազմել է 756,755 հազար դրամ:

Հիմնադրամը գործում է ՀՀ Սահմանադրության, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի, «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի, ՀՀ այլ օրենքների և իրավական ակտերի, միջազգային պայմանագրերի հիման վրա:

2013թ.-ին Հիմնադրամի աշխատակիցների միջին թվաքանակը կազմել է 5 հոգի (2012թ.՝ 6):

Հիմնադրամի գրանցման և գործունեության վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան 0010, Վ. Սարգսյան 6:

2 Պատրաստման հիմքերը

2.1 Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՄԽ) կողմից:

Ներկայումս ՖՀՄՍ չեն պարունակում հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման վերաբերյալ հատուկ ուղեցույցներ՝ շահույթ չհետապնդող և ոչ կառավարական կազմակերպությունների համար: Եթե ՖՀՄՍ չի տալիս ուղղություն շահույթ չհետապնդող ոլորտի կազմակերպություններին հատուկ գործարքների հաշվառման վերաբերյալ, ապա հաշվապահական հաշվառման քաղաքականությունը պետք է հիմնվի ՖՀՄՍ ընդհանուր սկզբունքների վրա՝ համաձայն Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՄԽ) «Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հիմքերի»:

2.2 Ծանաչման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով, բացառությամբ վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների, որոնք ներկայացված են իրական արժեքով:

2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Հիմնադրամի գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Հիմնադրամի գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով (եթե այլ բան նշված չէ), քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել օգտակար է Հիմնադրամի ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՍ-ին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Հիմնադրամի ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա: Առավել մեծ դատողություն պահանջող և բարդություն ներկայացնող էական ոլորտները, կամ այն ոլորտները, որտեղ ենթադրություններն ու գնահատումներն էական են ֆինանսական հաշվետվությունների համար, բացահայտված են ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 20-ում:

2.5 Նոր և վերանայված ստանդարտների ընդունում

Ընթացիկ տարում Հիմնադրամն ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2013թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՄԽ) և ՀՀՄՄԽ-ի Մեկնաբանման կոմիտեի (ՄԿ) կողմից:

Նոր և վերանայված ստանդարտներ և մեկնաբանություններ, որոնք կիրառելի են 2013թ. հունվարի 1-ից և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար

ՖՀՄՄ 10 «Ֆինանսական հաշվետվություններ»

ՖՀՄՄ 10-ը փոխարինում է ՀՀՄՄ 27-ին. *«Լ առանձին ֆինանսական հաշվետվություններ»* և Ստանդարտների մեկնաբանությունների կոմիտեի մեկնաբանություն (SIC) 12-ին. *«Համախմբում. Հատուկ նպատակների կազմակերպություններ»*: ՖՀՄՄ 10-ը վերանայում է վերահսկողության սահմանումը և տրամադրում է նոր ընդարձակ ուղեցույց՝ ստանդարտի կիրառման համար: Այս նոր պահանջները կարող են հնարավոր ազդեցություն ունենալ այն հարցի վրա, թե արդյոք ներդրումը համարվում է ներդրում դուստր կազմակերպությունում՝ այդպիսով փոփոխելով համախմբման շրջանակները: Այնուամենայնիվ, համախմբման գործընթացներին, չվերահսկվող մասնաբաժնի հաշվառմանը և դուստր կազմակերպության նկատմամբ վերահսկողության կորուստի հաշվառմանը ներկայացվող պահանջները մնում են անփոփոխ: Գեկավարությունը եզրակացրել է, որ ՖՀՄՄ 10-ը չի փոփոխել Խմբի՝ 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ գոյություն ունեցող ներդրումներից որևէ մեկի դասակարգումը (որպես դուստր կամ այլ):

ՖՀՄՄ 13. «Իրական արժեքի չափում»

ՖՀՄՄ 13-ը հստակեցնում է իրական արժեքի սահմանումները և ապահովում է համապատասխան ուղեցույց և մանրամասն բացահայտումներ իրական արժեքի չափումների վերաբերյալ: Ստանդարտը չի առանձնացնում, թե որ միավորները պետք է հաշվառվեն իրական արժեքով: ՖՀՄՄ 13-ի շրջանակներն ընդարձակ են, և այն կիրառելի է ինչպես ֆինանսական, այնպես էլ ոչ ֆինանսական այն հոդվածների համար, որոնց համար այլ ՖՀՄՄ-ները պահանջում կամ թույլ են տալիս իրական արժեքի չափումներ և իրական արժեքի չափումների վերաբերյալ բացահայտումների կատարում, բացառությամբ որոշ հանգամանքների:

ՖՀՄՄ 13-ը կիրառելի է առաջընթաց՝ 2013թ. հունվարի 1-ից և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Ստանդարտի կիրառման առաջին տարում պարտադիր չէ բացահայտումներին ներկայացվող պահանջները կիրառել համեմատական տեղեկատվության նկատմամբ:

Ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Հիմնադրամի կողմից

Այս ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՄԽ) կողմից թողարկվել են որոշակի նոր ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ

գործող ստանդարտների վերաբերյալ, սակայն դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Հիմնադրամի կողմից:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ բոլոր կիրառելի հրապարակումները կներդրվեն Հիմնադրամի հաշվապահական հաշվառման քաղաքականությունում սկսած հրապարակման ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող առաջին իսկ ժամանակաշրջանից: Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների համար կիրառելի նոր ստանդարտների, փոփոխությունների և մեկնաբանությունների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է ստորև: Որոշ այլ նոր ստանդարտներ և մեկնաբանություններ թողարկվել են, սակայն չի ակնկալվում, որ դրանք Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վրա էական ազդեցություն կունենան:

ՖՀՄՍ 9. «Ֆինանսական գործիքներ»

ՀՀՄՍԽ-ն մտադրված է ՀՀՄՍ 39-ը՝ «Ֆինանսական գործիքներ՝ ճանաչումը և չափումը», ամբողջությամբ փոխարինել ՖՀՄՍ 9-ով: Առ այսօր թողարկվել են ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ճանաչման, դասակարգման, չափման և ապաճանաչման վերաբերյալ, ինչպես նաև հեջավորման վերաբերյալ գլուխները: Նախկինում նախատեսված էր, որ սույն գլուխները կիրառելի կլինեն 2015թ. հունվարի 1-ից և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Այնուամենայնիվ, 2013թ. նոյեմբերին 2015թ. հունվարի 1-ը ՖՀՄՍ 9-ի կիրառման պարտադիր ամսաթիվ լինելու պայմանը հանվել է՝ կազմակերպություններին նոր պահանջներին անցում կատարելու համար բավարար ժամանակ տրամադրելու համար: Արժեզրկման մեթոդաբանության վերաբերյալ գլուխները դեռևս գտնվում են մշակման փուլում: 2013թ. նոյեմբերին ՖՀՄՍ 9-ում կատարված փոփոխությունների արդյունքում թույլատրվում է ՖՀՄՍ 9-ում արդեն իսկ ներառված, այսպես կոչված՝ «սեփական պարտքի» վերաբերյալ դրույթները կիրառել մեկուսացված՝ առանց ֆինանսական գործիքների այլ հաշվառումները փոփոխելու անհրաժեշտության:

Հիմնադրամի ղեկավարությունը դեռևս պետք է գնահատի այս նոր ստանդարտի ազդեցությունը Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վրա: Ղեկավարությունը չի նախատեսում ՖՀՄՍ 9-ը կիրառել նախքան ստանդարտն ամբողջովին պատրաստ լինի և հնարավոր լինի գնահատել դրա ընդհանուր ազդեցությունը:

Տարեկան բարեփոխումներ՝ 2010-2012թթ.

2010-2012թթ. տարեկան բարեփոխումները մի շարք ՖՀՄՍ-ներում կատարել են որոշ աննշան փոփոխություններ: Հիմնադրամին վերաբերող փոփոխությունները ամփոփված են ստորև.

ՖՀՄՍ 13. «Իրական արժեքի չափում»

Կարճաժամկետ դեբիտորական և կրեդիտորական պարտքեր

- փոփոխվում են եզրակացությունների համար հիմքերը՝ պարզաբանելու համար, որ Հիմնադրամը պարտադրված չէ հաստատված տոկոսադրույք չունեցող կարճաժամկետ դեբիտորական և կրեդիտորական պարտքերը զեղչել հաշիվ-

ապրանքագրում նշված գումարից ցածր արժեքի, եթե զեղչման ազդեցությունն էական չէ:

ՀՀՍՍ 16. «Հիմնական միջոցներ»

Վերագնահատման մեթոդ - կուտակված մաշվածության համամասնորեն վերաբաշխում

- քննարկվում է հիմնական միջոցի միավորի համար վերագնահատման մեթոդի կիրառմամբ չափվող կուտակված մաշվածության հաշվարկման եղանակների փաստացի բազմազանությունը,
- պարզաբանվում է, որ համախառն հաշվեկշռային արժեքը ճշգրտվում է այնպիսի եղանակով, որը համադրելի է հաշվեկշռային արժեքի վերագնահատմանը,
- պարզաբանվում է, որ կուտակված մաշվածությունը հաշվարկվում է որպես համախառն հաշվեկշռային արժեքի և կուտակված արժեզրկումից կորուստները հաշվի առնելուց հետո հաշվարկված հաշվեկշռային արժեքի տարբերություն:

ՀՀՍՍ 24. «Կապակցված կողմերի բացահայտումներ»

Առանցքային կառավարչական անձնակազմ

- փոփոխվում է «կապակցված կողմի» սահմանումը, որպեսզի ներառի «կառավարչական ընկերությունները», որոնք հաշվետու Հիմնադրամին մատուցում են առանցքային կառավարչական անձնակազմի ծառայություններ,
- պահանջվում է, որպեսզի հաշվետու ընկերությունը բացահայտի առանձին կառավարչական ընկերությանը որպես առանցքային կառավարչական անձնակազմի ծառայությունների վճար ճանաչված գումարները,
- տրամադրվում է բացառության իրավունք՝ հաշվետու Հիմնադրամին թույլ տալով չբացահայտել առանցքային կառավարչական անձնակազմին վճարված փոխհատուցումները, եթե փոխհատուցումը վճարվել է կառավարչական ընկերության միջոցով:

ՀՀՍՍ 38. «Ոչ նյութական ակտիվներ»

Վերագնահատման մեթոդ - կուտակված ամորտիզացիայի համամասնորեն վերաբաշխում

- ոչ նյութական ակտիվների հաշվառման մասով կատարվել են ՀՀՍՍ 16-ում. «Հիմնական միջոցներ», նկարագրված փոփոխություններին համանման փոփոխություններ:

Վերը ներկայացված 2010-2012թթ. տարեկան բարեփոխումները ուժի մեջ են մտնում 2014թ. հուլիսի 1-ից և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Գնկավարության կանխատեսմամբ այս փոփոխությունները էական ազդեցություն չեն ունենա Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վրա:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

3.1 Արտարժույթ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Հիմնադրամի համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված փոխարժեքը. 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում է 405.64 ՀՀ դրամ, 1 եվրոն կազմում է 559.54 ՀՀ դրամ (2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում է 403.58 ՀՀ դրամ, 1 եվրոն կազմում է 532.24 ՀՀ դրամ):

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում:

3.2 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման և ուղղակիորեն վերագրվող ծախսումները: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Հիմնական միջոցի վրա կատարվող հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Համակարգչային տեխնիկա
Տնտեսական գույք

3 տարի
1-5 տարի:

3.3 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Հիմնադրամի կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ամորտիզացիան ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, որը կազմում է 5-7 տարի համակարգչային ծրագրերի համար:

3.4 Պաշարներ

Պաշարները ներառում են արագամաշ առարկաներ և հաշվառվում են ինքնարժեքից և իրացման գուտ արժեքից նվազագույնով: Իրացման գուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է՝ հանած վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները: Պաշարների ինքնարժեքը հաշվարկվում է՝ օգտագործելով առաջին մուտք՝ առաջին ելք (ԱՄԱԵ) մեթոդը, և ներառում է պաշարների ձեռքբերման, ինչպես նաև դրանք իրենց ներկայիս վիճակին և գտնվելու վայր հասցնելու ծախսերը:

3.5 Ֆինանսական գործիքներ

Ճանաչում, սկզբնական չափում և ապաճանաչում

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Հիմնադրամը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից ռիսկերով ու հատուցումներով փոխանցվում են երրորդ կողմին:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների, որոնք սկզբնապես դասակարգվում են որպես ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, որոնք սկզբնապես չափվում են իրական արժեքով:

Ֆինանսական ակտիվների դասակարգումը և հետագա չափումը

Հետագա չափումն իրականացնելու համար ֆինանսական ակտիվները, բացառությամբ հեջավորման գործիքների, սկզբնական ճանաչման ժամանակ բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- փոխառություններ և դեբիտորական պարտքեր,

- ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ,
- մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ:

Ֆինանսական ակտիվները սկզբնական ճանաչման ժամանակ վերագրվում են տարբեր կատեգորիաների՝ կախված գործիքի բնույթից և նպատակից: Ֆինանսական գործիքի կատեգորիան համապատասխանեցվում է այն սկզբունքին, որով չափվում է տվյալ գործիքը և այն հանգամանքին, թե արդյոք առաջացող եկամուտը և ծախսերը ճանաչվում են շահույթում կամ վնասում, թե ուղղակիորեն այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում: Հիմնադրամի ֆինանսական ակտիվները, ըստ կատեգորիաների ներկայացված են ծանոթագրություն 21-ում:

Ընդհանուր առմամբ, Հիմնադրամի բոլոր ֆինանսական ակտիվները ճանաչվում են՝ օգտագործելով վերջնահաշվարկի ամսաթվի հաշվառումը: Ֆինանսական ակտիվների հետ կապված բոլոր ծախսերը և եկամուտները, որոնք ճանաչվում են շահույթում կամ վնասում, ներկայացվում են «Ֆինանսական ծախս», «Ֆինանսական եկամուտ» կամ «Այլ ֆինանսական արդյունքներ» հոդվածներում, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման, որը ներկայացվում է «Այլ ծախսեր» հոդվածում:

i. Փոխառություններ և դեբիտորական պարտքեր

Փոխառություններն ու դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ են, որոնք չեն գնանշվում ակտիվ շուկայում և ներառում են երաշխիքային վճարների գծով դեբիտորական պարտքերը, ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջները, ինչպես նաև մնացորդները դրամարկղում և բանկերում:

Դեբիտորական պարտքեր՝ երաշխիքային վճարների գծով ստացվելիք գումարներ

Հիմնադրամի կողմից հաշվարկված և դեռևս չստացված երաշխիքային գումարները (տես՝ ծանոթագրություն 1) ճանաչվում են Հիմնադրամի ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ դեբիտորական պարտքերում՝ որպես «Երաշխիքային վճարների գծով ստացվելիք գումարներ», երբ ստացումը դառնում է հավանական: Հիմնադրամն այս դեբիտորական պարտքերի գծով արժեզրկման պահուստ ստեղծում է այն ժամանակ, երբ առկա է օբյեկտիվ ապացույց, որ առևտրային բանկերը չեն կատարի «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքով սահմանված վճարները: 2013թ. դեկտեմբերի 31-ի և 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամի ղեկավարության գնահատմամբ նման պահուստի ստեղծման անհրաժեշտություն չկա:

Մնացորդներ դրամարկղում և բանկերում

Մնացորդները դրամարկղում և բանկերում ներառում են կանխիկ միջոցները, բանկային հաշիվների մնացորդները և դրամական միջոցները՝ ճանապարհին:

Գրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության մեջ դրամական միջոցները և դրանց համարժեքները չեն ներառում ՀՀ ԿԲ-ում պահվող ավանդները (տես՝ ծանոթագրություն 11), քանի որ դրանք ներդրվել են 3 ամիսը գերազանցող ժամկետով:

Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Հետվաճառքի պայմանով գնված արժեթղթերը («հակադարձ ռեպո») չեն ճանաչվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, իսկ տրամադրված գումարները հաշվառվում են որպես պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ կամ հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ:

Արժեթղթերի գնման և վաճառքից առաջացած եկամուտը կամ ծախսը իրենից ներկայացնում է տոկոսային եկամուտ կամ ծախս, որոնք հաշվեգրվում են հետզման պայմանագրերի գործողության ժամկետների ընթացքում՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

ii. Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները ոչ ածանցյալ գործիք հանդիսացող ֆինանսական ակտիվներն են, որոնք Հիմնադրամի կողմից նախատեսված են որպես վաճառքի համար մատչելի կամ որոնք դասակարգված չեն որպես ֆինանսական ակտիվների այլ կատեգորիաներ: Հիմնադրամի վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները ներառում են Հայաստանի Հանրապետության Ֆինանսների Նախարարության կողմից թողարկված պետական պարտատոմսերը:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները չափվում են իրական արժեքով: Իրական արժեքով չափումից առաջացած օգուտը կամ վնասը ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում և ճանաչվում է պահուստներում՝ վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատման պահուստում, բացառությամբ արժեգրկման կորուստների և դրամական ակտիվների փոխարժեքային տարբերությանը, որոնք ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Երբ ակտիվն օտարվում է կամ ունի արժեգրկման հայտանիշ, ապա կուտակված օգուտը կամ վնասը ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում և վերադասակարգվում է պահուստներից համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն և ներկայացվում է որպես վերադասակարգման ճշգրտում այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում: Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվառված տոկոսային եկամուտը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում որպես ֆինանսական եկամուտ (տես՝ ծանոթագրություն 17):

Արժեգրկման կորստի հակադարձումը ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում, բացառությամբ պարտատոմս հանդիսացող ֆինանսական ակտիվների, որոնք ճանաչվում են ֆինանսական արդյունքներում միայն այն դեպքում, երբ հակադարձումը կարող է օբյեկտիվորեն վերաբերել այն իրադարձությանը, որը տեղի է ունեցել արժեգրկումից առաջացած վնասի ճանաչումից հետո:

Այս կատեգորիայում ձեռք բերված պետական պարտատոմսերը դասակարգելիս ղեկավարությունը կիրառում է դատողություններ, որոնք նկարագրված են ծանոթագրություն 20-ում:

iii. Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ

Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները ֆիքսված կամ որոշելի վճարումներով, ֆիքսված մարման ժամկետ ունեցող ոչ ամսանյալ ֆինանսական ակտիվներ են: Ներդրումները դասակարգվում են որպես մինչև մարման ժամկետը պահվող, եթե ղեկավարությունը մտադրված է պահել դրանք մինչև դրանց մարման ժամկետը: Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները ներառում են Հայաստանի Հանրապետության Ֆինանսների Նախարարության կողմից թողարկված պետական պարտատոմսերը, «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկված պարտատոմսերը, ինչպես նաև կարճաժամկետ ավանդները՝ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական Բանկում:

Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ի լրումն՝ ֆինանսական ակտիվը չափվում է գնահատված դրամական միջոցների հոսքերի ներկա արժեքով, եթե առկա է ներդրումների արժեզրկման օբյեկտիվ հայտանիշ: Ներդրման հաշվեկշռային արժեքի ցանկացած փոփոխություն ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը և հետագա չափումը

Հիմնադրամի ֆինանսական պարտավորությունները ներառում են վարկերը և կրեդիտորական պարտքերը: Հիմնադրամի ֆինանսական պարտավորությունները, ըստ կատեգորիաների, ներկայացված են ծանոթագրություն 21-ում:

i. Վարկեր

Վարկերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ առանց գործարքային ծախսերի: Սկզբնական ճանաչումից հետո վարկերը չափվում են ամորտիզացված արժեքով, իսկ այս արժեքի և մարման արժեքի միջև տարբերությունը վարկի ժամկետի ընթացքում ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով: Տոկոսավճարները և վարկերի հետ կապված այլ ծախսերը ծախսագրվում են կատարմանը զուգահեռ՝ որպես ֆինանսական ծախսերի մի մաս:

ii. Կրեդիտորական պարտքեր

Կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

3.6 Արժեզրկում

Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում

Անորոշ օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվները չեն ամորտիզացվում և յուրաքանչյուր տարի ենթարկվում են արժեզրկման ստուգման: Մաշվող ակտիվները արժեզրկման համար վերանայվում են, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարը վաճառքի գուտ գնից և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստներն անմիջապես ճանաչվում են որպես ծախս համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորուստը դիտվում է որպես վերագնահատումից արժեքի նվազում:

Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը պետք է ավելացվի մինչև նրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլինեին: Արժեզրկումից կորուստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորուստի ցանկացած հակադարձում դիտվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական ակտիվները, բացառությամբ այն ֆինանսական ակտիվների՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, գնահատվում են արժեզրկման հայտանիշի առկայության համար: Ֆինանսական ակտիվներն արժեզրկված են, եթե առկա է անկողմնակալ վկայություն, որ ֆինանսական ակտիվների սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ մի քանի իրադարձություններ ազդել են ակնկալվող դրամական միջոցների հոսքերի վրա:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման կորուստը հաշվառվում է ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով գեղջված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի ներկա արժեքի միջև տարբերությամբ: Բոլոր ֆինանսական ակտիվների համար արժեզրկումից կորուստն ուղղակիորեն նվազեցվում է ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքից, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի, որոնց հաշվեկշռային արժեքը նվազեցվում է կասկածելի պարտքի պահուստի միջոցով:

Բացառությամբ վաճառքի համար մատչելի սեփական կապիտալի գործիքների, եթե հետագա ժամանակաշրջանում արժեզրկման կորուստը նվազում է, և նվազումը օբյեկտիվորեն կարելի է վերագրել արժեքի իջեցումից հետո տեղի ունեցած դեպքերին, ապա նախկինում ճանաչված արժեզրկման կորուստը հակադարձվում է՝ ճանաչվելով համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն չափով, որ հակադարձումը չհանգեցնի ֆինանսական ակտիվի այնպիսի հաշվեկշռային արժեքի, որը գերազանցի այն ամորտիզացված արժեքը, որը կլինի, եթե այդ ֆինանսական ակտիվի արժեքի իջեցման հակադարձման ամսաթվի դրությամբ արժեզրկում ճանաչված չլիներ:

Ինչ վերաբերում է վաճառքի համար մատչելի սեփական կապիտալի արժեքներին, արժեզրկումից հետո իրական արժեքի աճն ուղղակիորեն ճանաչվում է սեփական կապիտալում:

3.7 Պահուստների տարրեր

Այլ պահուստներ

Հիմնադրից ստացված դրամային ներդրումները և առևտրային բանկերից ստացված երաշխիքային վճարները ճանաչվում են անվանական արժեքով՝ որպես պահուստների տարր (այլ պահուստներ կամ հիմնադրից ստացված ներդրումներ): Ստացված ոչ դրամային ներդրումները նույնպես ճանաչվում են պահուստներում՝ անվանական արժեքով կամ ստացման օրվա դրությամբ դրանց իրական արժեքով:

Վերագնահատման պահուստ

Վերագնահատման պահուստը ձևավորվում է վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներն իրական արժեքով ներկայացնելու արդյունքում:

3.8 Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

«ՀՀ շահութահարկի մասին» օրենքի համաձայն Հիմնադրամի համար սահմանված է շահութահարկի արտոնություն «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» օրենքի համաձայն ստացված եկամուտների մասով:

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը:

3.9 Եկամտի ճանաչում

Տոկոսներից եկամուտ

Տոկոսային եկամուտը ճանաչվում է համաձայնության հիմունքով՝ մնացորդային արժեքի նկատմամբ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքը, որը զեղչում է ակնկալվող ապագա դրամական միջոցների ներհոսքերը ֆինանսական ակտիվի ակնկալվող ժամկետում՝ մինչև ակտիվի գուտ հաշվեկշռային արժեքը:

4 Հիմնական միջոցներ

Հազար դրամ	Համակարգչային տեխնիկա	Տնտեսական գույք	Ընդամենը
<i>Սկզբնական արժեք</i>			
2012թ. հունվարի 1-ի դրությամբ	3,678	344	4,022
Ավելացում	895	137	1,032
2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	4,573	481	5,054
Ավելացում	819	-	819
2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	5,392	481	5,873
<i>Կուտակված մաշվածություն</i>			
2012թ. հունվարի 1-ի դրությամբ	2,517	242	2,759
Տարվա հաշվարկ	781	155	936
2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	3,298	397	3,695
Տարվա հաշվարկ	942	57	999
2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	4,240	454	4,694
<i>Հաշվեկշռային արժեք</i>			
2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,275	84	1,359
2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,152	27	1,179

2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ զրո հաշվեկշռային արժեք ունեցող հիմնական միջոցների սկզբնական արժեքը կազմում է 2,728 հազար դրամ (2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 2,142 հազար դրամ):

5 Ոչ նյութական ակտիվներ

Հազար դրամ	Համակարգչային ծրագրեր	Մշակման փուլում գտնվող ծրագրեր	Ընդամենը
<i>Սկզբնական արժեք</i>			
2012թ. հունվարի 1-ի դրությամբ	17,252	800	18,052
Ավելացում	1,465	-	1,465
2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	18,717	800	19,517
Ավելացում	84	-	84
2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	18,801	800	19,601
<i>Կուտակված ամորտիզացիա</i>			
2012թ. հունվարի 1-ի դրությամբ	1,222	-	1,222
Տարվա ծախս	2,479	-	2,479
2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	3,701	-	3,701
Տարվա ծախս	2,736	-	2,736
2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	6,437	-	6,437
<i>Հաշվեկշռային արժեք</i>			
2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	15,016	800	15,816
2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	12,364	800	13,164

Հիմնադրամի պատվերով «Մատ Սոլյուշնզ» ՍՊԸ կողմից մշակվել է «Ֆինանսական միջոցների կառավարման ծրագրային համակարգի» տեխնիկական նկարագիր, որը հաշվառվում է որպես մշակման փուլում գտնվող ծրագիր: Նշված տեխնիկական նկարագրին համապատասխան ծրագրային համակարգը գտնվում է մշակման ընթացքում:

2011թ. Հիմնադրամը շահագործման է հանձնել «ԼՍՈՖՏ» ՍՊԸ կողմից մշակված հատուցման գործընթացի ավտոմատացման ծրագիրը, որը բանկերի ավանդատուների և իրենց ավանդների մանրամասն տվյալների բազայի հիման վրա թույլ կտա իրականացնել ավանդատուների հատուցման ավտոմատացման գործընթացը:

6 Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվներ ձեռք բերելու համար

Ոչ ընթացիկ ակտիվներ ձեռք բերելու համար կանխավճարները ներառում են «Ֆինանսական միջոցների կառավարման ծրագրային համակարգի» մշակման համար փոխանցված կանխավճարները:

7 Մինչև մարման ժամկետը պահվող պարտատոմսեր

Հազար դրամ	2013թ.	2012թ.
Տարեսկզբի մնացորդ	10,576,569	8,145,629
Ավելացում	13,640,082	9,689,111
Տոկոսային եկամուտ (տես՝ ծանոթագրություն 17)	1,274,645	897,411
Մարում	(12,309,720)	(8,155,582)
Տարեվերջի մնացորդ	13,181,576	10,576,569

Մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթերը բաղկացած են Հայաստանի Հանրապետության Ֆինանսների Նախարարության կողմից թողարկված պետական պարտատոմսերից և «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ-ից գնված պարտատոմսերից, որոնք կամ զեղչատոկոսային են (որոնց գծով եկամուտն առաջանում է միայն գնման արժեքի և անվանական արժեքի տարբերությունից) կամ ֆիքսված արժեկարգի վճարումներով են, առավելագույնը մինչև 2016թ. ապրիլի 29-ը մարման ժամկետով: Պարտատոմսերի գնման եկամտաբերությունը կազմել է 8.01-13.99 տոկոս: Այս պարտատոմսերի իրական արժեքները, որոնք գնահատվել են հաշվի առնելով հաշվետու ամսաթվի դրությամբ դրանց համար առաջարկվող գնման արժեքը, համապատասխանում են իրենց հաշվեկշռային արժեքներին:

Մինչև մարման ժամկետը պահվող պարտատոմսերի ժամկետային վերլուծությունը բացահայտված է ստորև.

Հազար դրամ	2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ոչ ընթացիկ մաս	6,321,999	2,556,408
Ընթացիկ մաս	6,859,577	8,020,161

Ղեկավարության գնահատումները և դատողությունները կապված մինչև մարման ժամկետը պահվող պարտատոմսերի հետ ներկայացված են ծանոթագրություն 20-ում: Տես՝ ծանոթագրություն 3.5-ը՝ այս ֆինանսական ակտիվների համար կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ:

8 Դեբիտորական պարտքեր

Հազար դրամ	2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Երաշխիքային վճարների գծով ստացվելիք գումարներ	446,716	360,146
Տրված կանխավճարներ	133	353
	<u>446,849</u>	<u>360,499</u>

Երաշխիքային վճարների գծով ստացվելիք գումարները վերաբերում են հաշվետու ֆինանսական տարվա չորրորդ եռամսյակի երաշխիքային վճարներին, որոնք Հիմնադրամը դեռևս չի ստացել հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում՝ սույն ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ: Այս գումարների հաշվապահական հաշվառման քաղաքականությունը ներկայացված է ծանոթագրությունում 3.5-ում:

Բոլոր գումարները կարճաժամկետ են: Դեբիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքը համապատասխանում է իրական արժեքին:

Երաշխիքային վճարների գծով ստացվելիք գումարները հաշվառելիս ղեկավարությունը կիրառում է դատողություններ, որոնք նկարագրված են ծանոթագրություն 20-ում:

9 Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

Հազար դրամ	2013թ.	2012թ.
Տարեսկզբի մնացորդ	2,809,898	2,265,184
Ավելացում	1,672,684	1,540,243
Տոկոսային եկամուտ (տես՝ ծանոթագրություն 17)	368,624	362,118
Օտարում	(1,748,919)	(1,350,485)
Վերագնահատման զուտ արդյունք՝ փոխանցված պահուստներ	188,598	57,115
Վերագնահատման զուտ արդյունք՝ պահուստներից փոխանցված	(47,041)	(64,277)
Տարեվերջի մնացորդ	<u>3,243,844</u>	<u>2,809,898</u>

Պահուստներ փոխանցված վերագնահատման զուտ արդյունքը վերաբերում է վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատմանը: Պահուստներից փոխանցված վերագնահատման զուտ արդյունքը վերաբերում է վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների օտարմանը:

Վաճառքի համար մատչելի ակտիվները ներառում են Հայաստանի Հանրապետության Ֆինանսների Նախարարության կողմից թողարկված պետական պարտատոմսեր, որոնք կամ զեղչատոկոսային են (որոնց գծով եկամուտն առաջանում է միայն գնման արժեքի և անվանական արժեքի տարբերությունից) կամ ֆիքսված արժեկտրոնի վճարումներով են,

առավելագույնը մինչև 2016թ. ապրիլի 29-ը մարման ժամկետով: Պարտատոմսերի գնման տոկոսադրույքը կազմել է 12.4-14.22 տոկոս:

Հիմնադրամի վաճառքի համար մատչելի պարտատոմսերի վերագնահատված արժեքի աճը պայմանավորված է երկրորդային շուկայում ՀՀ պետական պարտատոմսերի նկատմամբ պահանջարկի աճով, որը հանգեցրել է պարտատոմսերի տոկոսադրույքների նվազման, ինչպես նաև Հիմնադրամի վաճառքի համար մատչելի պարտատոմսերի ժամկետայնության կրճատման հետևանքով այդ պարտատոմսերի եկամտաբերության նվազմամբ:

Այս պարտատոմսերի իրական արժեքները որոշվում են կիրառելով Հայաստանի Հանրապետության Կենտրոնական Բանկի կողմից կառուցվող երկրորդային շուկայում գործարքների արդյունքում ձևավորված պետական պարտատոմսերի եկամտաբերության կորը:

Օտարումը ներառում է պետական պարտատոմսերի մարման կամ վաճառքի գծով վճարումները:

Գեկավարության գնահատումները և դատողությունները կապված վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների հետ ներկայացված են ծանոթագրություն 20-ում: Տես՝ ծանոթագրություն 3.5-ը՝ այս ֆինանսական ակտիվների համար կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ:

10 Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Ֆինանսական կազմակերպություններից ստացման ենթակա գումարները ներառում են 2013թ. ընթացքում «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի և «Արմավիսբանկ» ՓԲԸ-ի հետ կնքված ռեպո գործարքները, որոնք կնքվել են 7-15 օր ժամկետով և 7.9 -8.75 տոկոս տարեկան տոկոսադրույքով և ապահովված են պետական պարտատոմսերով:

2013թ. ռեպո գործարքների գծով հաշվեգրված տոկոսային եկամուտը կազմել է 19,045 հազար դրամ (2012թ.՝ 35,822 հազար դրամ, տես՝ ծանոթագրություն 17): Տես՝ ծանոթագրություն 3.5-ը՝ այս ֆինանսական ակտիվների համար կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ:

11 Ժամկետային ավանդներ

Հազար դրամ	2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ներդրված ավանդներ	2,158,390	1,862,840
Ավանդի գծով հաշվեգրված տոկոսներ	478	223
	<u>2,158,868</u>	<u>1,863,063</u>

3,500,000 եվրո գումարով ավանդը ներդրված է Հայաստանի Հանրապետության Կենտրոնական Բանկում՝ մինչև 2014թ. մարտի 3-ը: Տոկոսադրույքը յուրաքանչյուր եռամսյակի համար հավասար է նախորդ եռամսյակում ձևավորված վեցամսյա EURIBOR տոկոսադրույքի միջին մեծությանը՝ նախորդ եռամսյակի ընթացքում ձևավորված միջին օրական ցուցանիշների հիման վրա:

200,000 հազար դրամ գումարով ավանդը ներդրված էր Հայաստանի Հանրապետության Կենտրոնական Բանկում՝ մինչև 2014թ. հունվարի 22-ը, 8% տարեկան տոկոսադրույքով:

2013թ. ավանդների գծով հաշվեգրված տոկոսային եկամուտը կազմել է 13,623 հազար դրամ (2012թ.՝ 27,027 հազար դրամ) (տես՝ ծանոթագրություն 17):

12 Վերագնահատման պահուստ

Վերագնահատման պահուստը ձևավորվում է վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի ճշտումից (տես՝ ծանոթագրություն 3.7-ը):

13 Այլ պահուստներ

Հազար դրամ	Ներդրում հիմնադրից	Երաշխիքային վճարներ	Ընդամենը
2012թ. հունվարի 1-ի դրությամբ	5,000,000	4,197,567	9,197,567
Պահուստի համալրում	-	1,297,739	1,297,739
2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	5,000,000	5,495,306	10,495,306
Պահուստի համալրում	-	1,678,289	1,678,289
2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	5,000,000	7,173,595	12,173,595

«Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում 2010թ. հունիսի 24-ին կատարված փոփոխությունների արդյունքում երաշխավորված ավանդների չափը կրկնակի ավելացել է (ՀՀ դրամով ավանդների համար՝ 4,000 հազար դրամ, արտարժույթով ավանդների համար՝ 2,000 հազար դրամին համարժեք) և սույն օրենքում փոփոխություններն ուժի մեջ մտնելու օրվանից Հայաստանի Հանրապետության Կենտրոնական Բանկը, որպես միակ հիմնադիր, Հիմնադրամում կատարել է 5,000,000 հազար դրամ ներդրում:

Այլ պահուստները ներառում են նաև առևտրային բանկերից ստացված երաշխիքային վճարները (տես՝ ծանոթագրություն 1), որոնք Հիմնադրամը կօգտագործի իր կանոնադրական նպատակներն իրագործելիս:

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում այլ պահուստների ավելացումներում ներառվել են միայն հաշվետու տարիների ընթացքում հաշվեգրած բանկերի պարտադիր վճարները:

Այլ պահուստների հաշվառման նպատակով Հիմնադրամը կատարել է գնահատումներ, ինչպես ներկայացված է ծանոթագրություն 20-ում: Հիմնադրից ստացված միջոցները Հիմնադրամը ներդրել է պետական պարտատոմսերում:

14 Վարկեր

Հազար դրամ	2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Վարկեր ՀՀ կառավարությունից	1,958,390	1,862,840

ՀՀ կառավարության և Մայնի Ֆրանկֆուրտի Կրեդիտանշտալդ Ֆյուր Վիդերաուֆբաու հաստատության (KfW) միջև 2005թ. հուլիսի 8-ին կնքվել է վարկային պայմանագիր: Համաձայն այդ պայմանագրի՝ KfW-ն տրամադրել է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությանը 3,500,000 եվրո գումարով, 0.75 տոկոս տարեկան տոկոսադրույքով և մինչև 2045թ. հունիսի 25-ը մարման ժամկետով վարկ: Վարկը տրամադրվել է «ՀՀ առևտրային բանկերում ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորող համակարգի ամրապնդման» վարկային ծրագրի շրջանակներում: 2005թ. հուլիսի 28-ին կնքված ենթավարկային պայմանագրով վարկի գումարը տրամադրվել է Հիմնադրամին նույն՝ 0.75 տոկոս տարեկան տոկոսադրույքով, որպես ծրագրի իրականացնող: Վարկի հիմնական գումարի մարումը կատարվելու է հավասարաչափ գումարներով սկսած՝ 2015թ. դեկտեմբերի 25-ից: Վարկի օգտագործման դիմաց Հիմնադրամը հաշվեգրում և վճարում է տոկոսագումարներ կիսամյակային մուծումներով:

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում տոկոսային ծախսը կազմել է 14,282 հազար դրամ (2012թ.՝ 13,798 հազար դրամ, տես՝ ծանոթագրություն 17):

Հիմնադրամի արտարժույթային ռիսկերի մասին ավելի մանրամասն տեղեկատվություն ներկայացված է ծանոթագրություն 22-ում:

Վարկի իրական արժեքին վերաբերող ղեկավարության գնահատումները ներկայացված են ծանոթագրություն 20-ում:

15 Այլ վարչական ծախսեր

Հազար դրամ	2013թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2012թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործուղում և ներկայացուցչական ծախսեր	6,709	9,127
Գրասենյակային ծախսեր	184	358
Կապի և հեռահաղորդակցության ծախսեր	350	231
Այլ ծախսեր	1,444	1,104
	8,687	10,820

«Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ Հիմնադրամի վարչական ծախսերը և կապիտալ ներդրումները չեն կարող գերազանցել երաշխիքային վճարներ կատարող բոլոր բանկերի՝ նախորդ տարվա բանկային ավանդների միջին օրեկան ցուցանիշի 0.03 տոկոսը (տես՝ նաև ծանոթագրություն 1): Այդ ծախսերի թույլատրելի առավելագույն սահմանաչափը 2013թ. համար կազմել է 194,658 հազար դրամ (2012թ. համար՝ 143,325 հազար դրամ):

16 Այլ գործառնական ծախսեր

Հազար դրամ	2013թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2012թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Լուսաբանման և գովազդի ծախսեր	8,313	4,293
Աուդիտորական և խորհրդատվական ծախսեր	2,440	2,967
Բանկային ծառայությունների միջնորդավճարներ	11	22
	<u>10,764</u>	<u>7,282</u>

17 Ֆինանսական եկամուտ և ծախսեր

Հազար դրամ	2013թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2012թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
<i>Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներից եկամուտ</i>		
Տոկոսային եկամուտ պարտատոմսերից	1,274,645	897,411
Տոկոսային եկամուտ ավանդներից	13,623	27,027
Տոկոսային եկամուտ ֆինանսական կազմակերպությունների հետ գործարքներից	19,045	35,822
<i>Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներից եկամուտ</i>		
Տոկոսային եկամուտ պարտատոմսերից	<u>368,624</u>	<u>362,118</u>
Ընդհանուր ֆինանսական եկամուտ	<u>1,675,937</u>	<u>1,322,378</u>
Տոկոսային ծախսեր վարկի գծով	(14,282)	(13,798)
Պարտատոմսերի վաճառքից վնասներ	<u>(100)</u>	<u>(4,712)</u>
Ընդհանուր ֆինանսական ծախսեր	<u>(14,382)</u>	<u>(18,510)</u>
Զուտ ֆինանսական եկամուտ/(ծախսեր)	<u>1,661,555</u>	<u>1,303,868</u>

18 Այլ ֆինանսական հոդվածներ

Այլ ֆինանսական տարրերը ներառում են փոխարժեքային տարբերություններից ստացված օգուտը և վնասը՝

Հազար դրամ	2013թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2012թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	104,589	117,337
Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորություններ	<u>(104,643)</u>	<u>(117,375)</u>
	<u>(54)</u>	<u>(38)</u>

19 Շահութահարկի գծով ծախս

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2013թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)	2012թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)
Շահույթ մինչև հարկումը (համաձայն ՖՀՄՍ)	1,600,945		1,245,597	
Շահութահարկ՝ 20% դրույքաչափով (2012թ.՝ 20%)	320,189	20.00	249,119	20.00
Շահութահարկի վճարման արտոնության ազդեցություն	(320,189)	(20.00)	(249,119)	(20.00)
Շահութահարկի գծով ծախս	-	-	-	-

Համաձայն ՀՀ «Շահութահարկի մասին» օրենքի 36 հոդվածով սահմանված արտոնության՝ Հիմնադրամի՝ առևտրային բանկերի կողմից վճարված երաշխիքային վճարների գծով եկամուտները և մի շարք այլ եկամուտներ ազատվում են շահութահարկի վճարումից:

20 Կարևոր հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի, ինչպես նաև այլ ցուցանիշների վրա, ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք տվյալ հանգամանքներում համարվում են ընդունելի:

20.1 Կարևոր հաշվապահական գնահատումներ

Հիմնադրամն իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները, որպես կանոն, հազվադեպ են համապատասխանում իրական արդյունքներին: Ստորև ներկայացված են այն գնահատումներն ու ենթադրությունները, որոնց գծով առկա է ռիսկ, որ հաջորդ ֆինանսական տարում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները կենթարկվեն էական ճշգրտումների:

Պետական պարտատոմսեր

Հիմնադրամի ղեկավարության կողմից էական դատողություններ են կիրառվել պետական պարտատոմսերում կատարված ներդրումները դասակարգելիս: Մինչև պետական պարտատոմսերի դասակարգումը որպես «վաճառքի համար մատչելի» կամ «մինչև մարման ժամկետը պահվող»՝ Հիմնադրամի ղեկավարությունը գնահատում է այս պարտատոմսերի մինչև մարման ժամկետը պահելու իր մտադրությունները: Ղեկավարության մտադրությունները բխում են Հիմնադրամի պետական պարտատոմսերը կառավարելու բիզնես մոդելից (ներդրումային քաղաքականությունից), ինչպես նաև այդ պարտատոմսերի պայմանագրային դրամական միջոցների հոսքերից: Եթե չկան նման մտադրություններ, ապա պետական պարտատոմսերը դասակարգվում են որպես «վաճառքի համար մատչելի»: Տես՝ ծանոթագրություն 3.5-ը՝ այս պարտատոմսերի հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ:

Երաշխիքային վճարների գծով ստացվելիք գումարներ

Ինչպես ներկայացված է ծանոթագրություն 8-ում՝ երաշխիքային վճարների գծով ստացվելիք գումարները վերաբերում են ֆինանսական տարվա չորրորդ եռամսյակի երաշխիքային վճարներին, որոնք Հիմնադրամը դեռևս չի ստացել հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում: Ղեկավարության գնահատմամբ Հիմնադրամն ամբողջությամբ կհավաքագրի առևտրային բանկերից 2013թ. 4-րդ եռամսյակի համար ակնկալվող գումարները և հետևաբար այս դեբիտորական պարտքերի գծով պահուստ չի ստեղծվել:

Պահուստների տարրեր (այլ պահուստներ և ներդրումներ հիմնադրից)

Հիմնադրից ստացված դրամային ներդրումները, ինչպես նաև բանկերից ստացված երաշխիքային վճարները ճանաչվում են որպես պահուստների տարր: Հիմնադրամի ղեկավարության գնահատմամբ այս ստացված միջոցները չեն բավարարում պարտավորության ճանաչման պահանջներին, քանի որ հաշվետու ամսաթվի դրությամբ Հիմնադրամը չունի ներկա պարտավորություն որևէ երրորդ կողմի նկատմամբ: Այնուամենայնիվ նման պարտավորություն առաջանալու դեպքում, պարտավորության գումարի չափով կփոքրանա այլ պահուստների հոդվածը և կստեղծվի ընթացիկ պարտավորություն:

Վարկեր

ՀՀ կառավարության և Մայնի Ֆրանկֆուրտի Կրեդիտանշտալդ Ֆյուր Վիդերաուֆբաու հաստատության (KfW) միջև 2005թ. հուլիսի 8-ին կնքված վարկային պայմանագրի շրջանակներում Հիմնադրամին տրամադրվել է վարկ՝ 3,500 հազար եվրո գումարի չափով: Այս վարկի իրական արժեքը համապատասխանում է հաշվեկշռային արժեքին, քանի որ ղեկավարության գնահատմամբ՝ նման պայմաններով տրամադրվող վարկերի տոկոսադրույքը համապատասխանում է շուկայում գործող միջին տոկոսադրույքին:

21 Ֆինանսական գործիքներ

21.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի, ֆինանսական պարտավորության և բաժնային գործիքի յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3.5-ում:

21.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված մնացորդները վերաբերում են ակտիվների և պարտավորությունների հետևյալ կատեգորիաներին.

Ֆինանսական ակտիվներ

Հազար դրամ	2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ		
Պարտատոմսեր	13,181,576	10,576,569
Ժամկետային ավանդներ	2,158,868	1,863,063
Վաճառքի համար նատչելի ֆինանսական ակտիվներ		
Պարտատոմսեր	3,243,844	2,809,898
Փոխառություններ և դեբիտորական պարտքեր		
Ֆինանսական հաստատություններից ստացման ենթակա գումարներ	99,195	-
Դեբիտորական պարտքեր	446,716	360,146
Մնացորդներ բանկերում	4,047	7,882
	<u>19,134,246</u>	<u>15,617,558</u>

Ֆինանսական պարտավորություններ

Հազար դրամ	2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորություններ		
Վարկեր	1,958,390	1,862,840
Կրեդիտորական պարտքեր	2,638	3,904
	<u>1,961,028</u>	<u>1,866,744</u>

22 Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Առավել էական ֆինանսական ռիսկերը, որոնց Հիմնադրամը կարող է ենթարկվել, նկարագրված են ստորև:

22.1 Ֆինանսական ռիսկի գործոններ

ա) Շուկայական ռիսկ

Արտարժույթային ռիսկ

Հիմնադրամը չի ենթարկվում արտարժույթային ռիսկի, քանի որ եվրոյով ստացված իր վարկն ամբողջովին ներդրել է եվրոյով ժամկետային ավանդներում:

բ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Հիմնադրամը կարող է ֆինանսական կորուստներ կրել: Այս ռիսկի ազդեցությունը Հիմնադրամի համար առաջանում է տարբեր ֆինանսական գործիքներից, ինչպիսիք են դեբիտորական պարտքերը, ժամկետային ավանդները, մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները, ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջները և այլն: Պարտքային ռիսկի առավելագույն ազդեցությունը ներկայացված է հետևյալ ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներով`

Հազար դրամ	2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ֆինանսական ակտիվներ՝ հաշվեկշռային արժեքներ		
Պարտատոմսեր	16,425,420	13,386,467
Ժամկետային ավանդներ	2,158,868	1,863,063
Ֆինանսական հաստատություններից ստացման ենթակա գումարներ	99,195	-
Դեբիտորական պարտքեր	446,716	360,146
Սնացորդներ դրամարկղում և բանկերում	4,047	7,882
	<u>19,134,246</u>	<u>15,617,558</u>

Հիմնադրամի ղեկավարության համոզմամբ պարտատոմսերի և ֆինանսական հաստատությունները ստացման ենթակա գումարների գծով պարտքային ռիսկ չկա, քանի որ այս պարտատոմսերն ամբողջովին թողարկված են պետության կամ «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ -ի կողմից: Հիմնադրամի ղեկավարության համոզմամբ նվազագույն է նաև դեբիտորական պարտքերի չհավաքագրելիության ռիսկը, քանի որ ամբողջ երաշխիքային վճարների գծով դեբիտորական պարտքերը մարվում են հաշվետու ժամանակաշրջանից հետո հաջորդող ժամանակաշրջանի առաջին եռամսյակի ընթացքում: Ի լրումն, ղեկավարության համոզմամբ դրամական միջոցների և դրանց համարժեքների (ներառյալ ավանդները Հայաստանի Հանրապետության Կենտրոնական Բանկում) հետ կապված պարտքային ռիսկ չկա, քանի որ դրանք պահվում են Հայաստանի Հանրապետության Կենտրոնական Բանկում և հեղինակավոր առևտրային բանկերում:

գ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը այն ռիսկն է, որ Հիմնադրամը սահմանված ժամկետներում ի վիճակի չի լինի մարել իր պարտավորվածությունները:

Հիմնադրամը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ բանկային հաշիվներում պահելով բավարար միջոցներ, ինչպես նաև պահելով բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ գործառնական պարտավորությունները ժամանակին մարելու նպատակով:

Հետևյալ աղյուսակում ներկայացված է Հիմնադրամի ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունների գծով պայմանագրային մնացյալ մարման ժամկետները: Աղյուսակը պատրաստված է ֆինանսական պարտավորությունների չզեղչված դրամական միջոցների հոսքերի հիման վրա՝ հաշվի առնելով ամենավաղ ամսաթիվը, երբ Հիմնադրամը ստիպված կլինի մարել այդ պարտավորությունները: Աղյուսակը ներառում է տոկոսների և մայր գումարի գծով դրամական միջոցների հոսքերը:

2013թ.	Գործիքներ փոփոխուն տոկոսա- դրույքով	Գործիքներ հաստատուն տոկոսա- դրույքով	Ընդամենը
Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք (%)		0.75%	
1-3 ամիս	2,638	-	2,638
Ավելի քան 5 տարի	-	1,958,390	1,958,390
	<u>2,638</u>	<u>1,958,390</u>	<u>1,961,028</u>

2012թ.	Գործիքներ փոփոխուն տոկոսա- դրույթով	Գործիքներ հաստատուն տոկոսա- դրույթով	Ընդամենը
Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույթ (%)		0.75%	
Մինչև 6 ամիս	3,904	-	3,904
Ավելի քան 5 տարի	-	1,862,840	1,862,840
	<u>3,904</u>	<u>1,862,840</u>	<u>1,866,744</u>

Հիմնադրամն իրացվելիության ռիսկի գնահատման և կառավարման ժամանակ հաշվի է առնում ֆինանսական ակտիվներից ակնկալվող դրամային հոսքերը, մասնավորապես դրամական միջոցները, պարտատոմսերի օտարումից մուտքերը և դեբիտորական պարտքերը: Հիմնադրամի դրամական միջոցները և դեբիտորական պարտքերը գերազանցում են անհրաժեշտ դրամական արտահոսքերը:

22.2 Ֆինանսական գործիքների իրական արժեքի չափում

Հիմնադրամը սկզբնական ճանաչումից հետո իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքները դասակարգում է 1-ից մինչև 3-րդ մակարդակներում՝ հիմնվելով իրական արժեքի դիտարկելիության աստիճանի վրա: Այս երեք մակարդակները ներկայացված են ստորև.

- 1-ին մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են մնանատիպ ակտիվների կամ պարտավորությունների ակտիվ շուկաներում գնանշվող գներից (չճշգրտված),
- 2-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներից, որոնք ակտիվի կամ պարտավորության գծով դիտարկվում են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող),

Այս մակարդակում են դասակարգված Հիմնադրամի ամբողջ վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները,

- 3-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են գնահատման հնարքների միջոցով, որոնք ներառում են ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

23 Պայմանականություններ

23.1 Գործարար միջավայր

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները շարունակական բնույթ են կրում: Որպես զարգացող շուկա՝ Հայաստանում բացակայում են կատարյալ գործարար միջավայր և համապատասխան ենթակառուցվածքներ, որոնք սովորաբար գոյություն ունեն ազատ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում: Բացի դրանից, տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել գործառնությունների ծավալները ֆինանսական շուկաներում, և ֆինանսական գործիքների իրական արժեքները կարող են չհամապատասխանել իրականացված գործարքներին: Հետագա տնտեսական զարգացման հիմնական խոչընդոտը

տնտեսական և ինստիտուցիոնալ զարգացման ցածր մակարդակն է՝ գույակցված տարածաշրջանային անկայունությամբ և կենտրոնացված տնտեսական հենքով, ինչպես նաև միջազգային տնտեսական ճգնաժամը:

Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունները չեն ներառում ճշգրտումների ազդեցությունը, եթե այդպիսիք կան, որոնք կարող էին անհրաժեշտ համարվել, եթե ներկա համաշխարհային ճգնաժամի ազդեցությունը Հայաստանում նկատելի և արժանահավատորեն գնահատելի լիներ:

23.2 Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Հիմնադրամը չունի ամբողջական ապահովագրական ծածկույթ իր ակտիվների և գործունեության ընդհատման համար, չունի նաև Հիմնադրամի գույքի կամ գործառնությունների հետ կապված պատահարների հետևանքով գույքին կամ շրջակա միջավայրին հասցված վնասի գծով երրորդ կողմի նկատմամբ պարտավորությունների ապահովագրություն: Քանի դեռ Հիմնադրամը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Հիմնադրամի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

23.3 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է՝ հաճախակի փոփոխվող օրենսդրությամբ, որը հաճախ մեկնաբանություններ է պահանջում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Գեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

24 Կապակցված կողմեր

24.1 Վերահսկողություն

Հիմնադրամը վերահսկվում է Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից, որը հանդիսանում է միակ հիմնադիրը:

2012-2013թթ. ընթացքում Հիմնադրամի դրամական միջոցները տեղաբաշխվել են Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկում՝ ավանդների տեսքով (տես՝ ծանոթագրություն 11):

Հիմնադրամի գործունեության ապահովման նպատակով Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից անհատույց օգտագործման են տրամադրվել տարածք և գրասենյակային գույք:

24.2 Գործարքներ ղեկավարության և նրանց անմիջական ազգականների հետ
Հիմնական ղեկավար անձնակազմը ժամանակաշրջանի ընթացքում ստացել է հետևյալ վարձատրությունը, որը ներառված է «Հատուցումներ աշխատակիցներին» հոդվածում.

Չափար դրամ	2013թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2012թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Աշխատավարձ և պարգևատրումներ, ներառյալ սոցիալական ապահովության վճարները և այլ հատուցումները	14,527	14,955



Grant Thornton

www.grantthornton.am